ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 115
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքը (Ծաղկալանջ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Խոյ համայնքի (Ծաղկալանջ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքը (Ծաղկալանջ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի (Ծաղկալանջ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-051-0107-0005 կադաստրային ծածկագրով 1.9424 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	04-051-0107-0005 կադաստրային ծածկագրով 1.9424 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների գրություններով ներկայացված պահանջները (կցվում են):

4. Խոյ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ծաղկալանջ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի (Ծաղկալանջ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «28» «մարտի» 2025 թ.